Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՑ, ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑԻՑ, ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԲԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳՐԵՐ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ձերդ Սրբություն,

Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու կապակցությամբ երջանիկ եմ՝ իմ և Ֆրանսիայի Հանրապետության անունից Ձեզ հղել ջերմագին շնորհավորանքներս: Հաջողություններով պսակված գահակալություն եմ մաղթում Ձեզ:

Բարեկամության, վստահության և հարգանքի հին ավանդույթն է միավորում ֆրանսիացի և հայ ժողովուրդներին: Այդ գործին իր բեղմնավոր և գործուն աջակցությունն է ի սպաս դնում Ֆրանսիայի հայ համայնքը: Հավատացնում եմ Ձեզ, որ Ֆրանսիան և անձամբ ես նվիրված ենք բազմադարյան այս կապերի ամրապնդմանը:

Հաճեցեք ընդունել, Ձերդ Սրբություն, հարգանացս գերագույն հավատիքը և սրտաբուխ զգացումներս:

Ձեզ հավատարիմ՝

ԺԱԿ ՇԻՐԱԿ
ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ձերդ Սրբություն,

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Ազգային-Եկեղեցական Ժողովը լուսավորչավանդ մականը Ձեզ վստահեց, ինչը Ձեր՝ ի Քրիստոս տքնաջան ծառայության արժանի գնահատանքն է:

Ցավոք, այս հանդիսավոր իրադարձությունը մթագնվեց Հայաստանի Ազգային Ժողովում տեղի ունեցած սարսափելի ողբերգությամբ, որի առիթով արտահայտում եմ նաև իմ ամենաանկեղծ ցավակցությունները:

Վստահ եմ, որ Ձեր հովվական իմաստուն խոսքը կպահպանի խաղաղությունը Ձեր հավատացյալների սրտերում՝ բուժելով ծանր կորստի հասցրած վերքերը:

Ի խորոց սրտի ցանկանում եմ Ձեր բարձր առաքելության հաջող իրականացում՝ ի բարօրություն եղբայրական հայ ժողովրդի:

Խորին հարգանոք՝

ԷԴՈՒԱՐԴ ՇԵՎԱՐԴՆԱՁԵ
ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎՈԼՈՇԻՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ձերդ Սրբություն,

Ընդունեցեք մեր անկեղծ շնորհավորանքները Հայ Եկեղեցու Հովվապետ, Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առթիվ: Այս ընտրությունը Ձեր՝ ի շահ Հայ Առաքելական Եկեղեցու և հայ ժողովրդի արդյունավետ գործունեության արժանի գնահատանքն է:

Հայ Եկեղեցու խաղաղասիրական, կրթա-լուսավորչական և բարեգործական եռանդուն գործունեությունը վաղուց հայտնի է ռուս ժողովրդին: Վստահ ենք, որ Ձեր հովվապետության ներքո Հայ Առաքելական Եկեղեցին կշարունակի նպաստել հասարակական կյանքի հոգևոր և բարոյական սկզբունքների, միջեկեղեցական խաղաղությանը և միջազգային փոխըմբռնմանն ու ամրապնդմանը: Մաղթում ենք Ձերդ Սրբությանը հաջողություն բարձր ծառայության մեջ, քաջառողջություն և երջանկություն:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԵՎՐՈՊԱՅԻ ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՎԻԿՏՈՐ ՁՈՐԿԱՅԵՎԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ձերդ Սրբություն,

Ի սրտե շնորհավորում եմ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առթիվ:

Մեր ժողովուրդները փոխադարձաբար կապված են բարեկամության դարավոր կապերով, և այդ կապերը առավել ևս ամրապնդելու գործում անչափ մեծ է մեր երկու Եկեղեցիների Հովվապետերի դերը:

Հայաստանի Ազգային Ժողովի պատգամավորները գործուն մասնակցություն են բերում Ուղղափառության հարցերով Եվրոպայի միջխորհրդարանային համաժողովի աշխատանքներին, որը նույնպես խթանում է հարաբերությունների սերտացմանն ու ամրապնդմանը:

Մաղթում ենք Ձեզ քաջառողջություն, երկար տարիների կյանք, բարեհաջող ու արգասաբեր սպասավորություն:

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ձերդ Սրբություն,

Սանկտ Պետերբուրգի կառավարության անունից թույլ տվեք շնորհավորել Ձեզ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու կապակցությամբ, ցանկանալ արևշատություն, հոգեկան և ֆիզիկական ամրություն, Աստծու օգնականությունը՝ հանուն Եկեղեցու և համայն հայ ժողովրդի իրականացվող մտահղացումներում, մարդկանց միջև խաղաղության և համերաշխության ամրապնդման ճանապարհին:

Ձեր բարձր ծառայության մեջ ամենայն հաջողությունների անկեղծ բարեմաղթանքով՝

Վ. Ա. ՅԱԿՈՎԼԵՎ
Նահանգապետ Սանկտ Պետերբուրգի

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Չերդ Սրբություն,

Ընդունեք անկեղծ շնորհավորանքներս Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առթիվ:

Հայ Առաքելական Եկեղեցին դարեր շարունակ հայ ժողովրդի կյանքում կարևոր և որոշիչ դեր է ունեցել՝ իր մեծ նպաստը բերելով ազգային-հոգևոր հարստությունների ստեղծմանը, մշակույթին, պետականությանը: Հայ ժողովրդի ճակատագիրը անքակտելիորեն կապված է Հայ Եկեղեցու հետ, որին բաժին ընկան բազում փորձություններ ու զրկանքներ: Եկեղեցին մշտապես եղել է ողջ աշխարհով սփռված համայն հայության միասնության առհավատչյան:

Ցավոք Չեր՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու ուրախալի լուրը մթագնվեց Ազգային Ժողովում ահաբեկիչների բարբարոսական գործողություններով: Խստորեն դատապարտելով այդ ահաբեկչությունը, ռուս ժողովուրդը Չեզ հետ սգում է զոհվածների համար:

Գիտակցում եմ, որ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս լինելը ոչ միայն հոգևոր պատվավոր առաքելություն է, այլև հսկայական պատասխանատվություն, որը պահանջում է թե՛ հոգեկան և թե՛ ֆիզիկական ուժերի անմնացորդ ընծայաբերում՝ ի փառս Աստծու և Չեր ժողովրդի:

Ամբողջ հոգով Չեզ և Չեր մերձավորներին մաղթում եմ քաջառողջություն, երջանկություն և բարօրություն, իսկ համայն հավատացելոց՝ խաղաղություն, համբերություն և հոգևոր մեծագործություններ՝ ի փառս ողջ հայ ժողովրդի:

Հարգանոք՝

Ա. ԴՐՅՈՒԿՈՎ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆ ՄԻՇԵԼ ԼԵԳՐԱՅԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ս. Էջմիածին

Վեհափառ Հայր,

Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առիթով պատիվ ունեմ Ձեզ փոխանցել Նորին Գերազանցություն Ֆրանսիայի Հանրապետության նախագահի ուղերձը:

Վերստին հավատալով ջերմ շնորհավորանքներս, հաճեցեք ընդունել, Վեհափառ Հայր, հարգանաց գերագույն հավատիքը:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱԼԹԱՅԻ ԻՆՔՆԻՇԽԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆ ԱՆԴՐԵ ԳՅՈՒՏՋՎԻԼԼԵՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Նորին Գերազանցություն թագաժառանգ և միաբանության առաջնորդ Էնդրյու Բերթիի և իմ անունից շնորհավորում եմ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդիդ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առթիվ, ցանկանում քաջառողջություն և երկար տարիների արդյունավոր գործունեություն:

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՐԹՈՒՐ ՆԱՋԱՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆԵՐՍԻՍԵԱՆ

Ս. Էջմիածին, Հայաստան

Սրտի անհուն գոհունակութեամբ իմացանք Ձերդ Սրբութեան, որպէս Լուսաւորչի 132-րդ արժանաւոր գահակալի, ընտրութեան մասին ի Ս. Էջմիածին:

Կը գիտակցինք, թէ Հայաստանի Հանրապետութեան համար այս ծանր օրերուն ընտրուելով Ամենայն Հայոց Հայրապետ պիտի դիմագրաւէք բազում դժուարութիւններ, որոնք Ձեր աննկուն կամքով և կորովով պիտի կարենաք յաղթահարել:

Խոնարհուելով Աստուածային հաճութեան և ժողովուրդի կամքին առջև, կը մաղթենք ուժ և եռանդ, լաւագոյնս նուիրաբերելու Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյն:

Որդիական զգացումներով՝

ԱՐԹՈՒՐ ՆԱՋԱՐԵԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ձերդ Սրբություն,

Ցնծությամբ ընդունեցինք Ձեր՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու լուրը: Բոլորիս հայտնի է Ձեր՝ առ Հայ Եկեղեցին տածած սերն ու հավատարմությունը, նվիրումը ողջ հայությանը, մեր սիրելի Եկեղեցու բարգավաճմանն ուղղված Ձեր գործերը և ամենից առավել՝ Ձեր հոգևոր կարող առաջնորդությունը, այնպես որ ապագայում ակնկալում ենք մի նոր դարաշրջան Ս. Էջմիածնի համար: Մաղթում ենք մեծամեծ հաջողություններ և վստահեցնում համակողմանի աջակցության պատրաստակամություն նոր հազարամյակում:

Խորապես ցավում ենք, որ Ազգային Ժողովում կատարված ողբերգական դեպքերը ստվերեցին այս հիասքանչ ավետիսը: Հայ ժողովուրդը կարիքն ունի խաղաղության և միևնույն ժամանակ՝ այս բարբարոսությունը դատապարտելու: Ձերդ Սրբության առաջնորդությունը առհավատչյան կլինի այս ծանր ժամանակներում:

Աղոթակից միությամբ՝

ԼՈՒԻԶ ՍԻՄՈՆ-ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՀԲԸՄ-ի ՆԱԽԱԳԱՀ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

Ձերդ Սրբություն,

Հանուն Հոգաբարձության և Տնօրենների խորհուրդների, Ամերիկայի Հայկական Համագումարի անդամների ու պաշտոնեության ընդունեցեք մեր շնորհավորանքները՝ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու կապակցությամբ:

Նոր հազարամյակի նախաշեմին Ձեր խնդիրները բազմազան են ու դժվարին: Վստահ ենք, որ թե՛ Հայաստանի ժողովրդի հոգևոր վերազարթոնքի և թե՛ աշխարհասփյուռ հայորդիների կարիքներին առնչվող յուրաքանչյուր մարտահրավեր հաջողությամբ կհաղթահարեք:

Լիահույս ենք, որ հարաբերությունները Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայկական Համագումարի միջև կշարունակեն մնալ գործնական և բարեկամական: Պատրաստ ենք ցուցաբերելու համակողմանի աջակցություն:

Անկեղծորեն՝

ՀՐԱՅՐ ՀՈՎՆԱՆՅԱՆ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Վեհափառ Տէր,

Ռամկավար Ազատական Կուսակցութեան բոլոր շարքերը ամբողջ Սփիւռքի տարածքին խանդավառութեամբ ու ջերմ զգացումներով ընդունեցին Ձեր ընտրութիւնը Սուրբ Էջմիածնի գահին, որպէս Ամենայն Հայոց 132-րդ Կաթողիկոս և Ծայրագոյն Պատրիարք Հայաստանեայց Եկեղեցւոյ:

Դժբախտաբար, Ձեր ընտրութիւնը զուգադիպեցաւ Հայրենիքէն ներս, դաւադիր գնդակներով մեր ժողովուրդի և իշխանութեան լաւագոյն ու նուիրեալ զաւակներու զոհաբերումին:

Բայց Դուք՝ որպէս քաջ Հովիւ, այդ ազգովին մեր շփոթահար պահուն, գիտցաք Ձեր դերին կարևորութիւնը ազգային համերաշխութեան խորհրդանիշը ըլլալու, երջանկայիշատակ մեր Հայրապետներու աւանդական օրինակով: Սուրբ Էջմիածնի սրբալոյս Խորանէն Ձեր օծման ընթացքին կրցաք յայտարարել գոհունակութիւն պատճառելով ամբողջ հայութեան՝ Հայաստան աշխարհին մէջ, թէ Սփիւռքի տարածքին. *«Թող Աստուած սիրով միաբան պահի ազգը և անսասան պետութիւնը Հայոց. խաչի մի նոր ճանապարհ անցանք ազգովին վերջին օրերս, հեղուեց անմեղ արիւնը Հայաստանի Հանրապետութեան այրերի ...:*

Բազմաչարչար մեր ժողովուրդը խոհեմութեամբ յաղթահարեց փորձութիւնը, շրջանցեց խաչի փրկագնով ձեռք բերուած մեր անկախութիւնը, հայրենի մեր պետութեան սպառնացող վտանգը: Չենք երկիւղում՝ որքան էլ մարտահրաւէրներ կան մեր առջև»:

Այո, վստահ ենք, և ճանչնալով Ձեր ամբողջական նուիրումը Հայրենիքին ու հայ ժողովուրդին, երբեք պիտի չընկրկիք դժուարութեանց ու փագնապներու պահուն ճակատին վրայ ըլլալու, ինչպէս եղան մեր հայրենասէր Հայրապետները: Եւ յաջողութեանց ու յաղթանակի օրերուն Սուրբ Էջմիածնի զանգակները պիտի ղօղանջեն՝ ցնծութեան մէջ դնելով ամբողջ մեր ժողովուրդը:

Վեհափառ Հայր, Եկեղեցիի ու եկեղեցական շրջանակներու բարեկարգութեան ծանր օրեր կը սպասեն Ձեզի: Վստահ ենք, որ կամքը, ցանկութիւնը

և, ինչու չէ, նաև վճռականութիւնը պիտի չպակսին Ձեզի այդ աշխատանքը տանելու:

Այս առիթով, ինչպէս յայտարարեցինք Վեհարանին մէջ Ձեզի, հոս ևս կը կրկնենք. մենք միշտ պատրաստ պիտի ըլլանք զօրակցելու Ձեզի, երբ պահանջքը ներկայացուի, և նաև անպաճոյճ պիտի գանք Ձեզի, երբ մեզ մտահոգող հարցեր ըլլան մեր Հայրենիքը, մեր Եկեղեցին և մեր ժողովուրդը յուզող:

Լաւագոյն ու ջերմ զգացումներով՝

Մատչիմ ի համբոյր Սուրբ Աջոյդ՝

ՀԱՅԿԱՇԷՆ ՈՒՋՈՒՆԵԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՌԱՄԿԱՎԱՐ ԱՋԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՎԱՀՐԻՄ ՃԵՐԵՃՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ
Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԵՐՍԻՍԵԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը, Սփիւռքի և Հայաստանի իր բոլոր շրջաններու, կառոյցներու և միութիւններու անունով սրտանց կը շնորհաւորէ Ձերդ Սրբութեան ընտրութեան և օծման առիթով, մաղթելով Ձեզի երկար ու քաջառողջ կեանք, Հայ Եկեղեցւոյ պայծառութեան համար Ձեր աշխատանքներուն յաջողութիւն:

Կը մաղթենք, որ Ձեր գահակալութեան օրով Ս. Էջմիածնայ և Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռներուն համար վերաբացուի եղբայրական գործակցութեան նոր դարաշրջան՝ ի շահ հայ ժողովուրդի գերագոյն շահերուն:

«ՀԱՅՔ» ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ի Ս. Էջմիածին, Հայաստան

Սրտանց շնորհավորում ենք Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո Հայրապետական Աթոռի Գահակալի Ձեր ընտրության առթիվ:

Դիտելով այն որպես հույժ նշանակալից երևույթ թե՛ հայ ազգի ու Հայաստանի և թե՛ համայն քրիստոնեական աշխարհի կյանքում՝ մաղթում ենք, որ Սուրբ Օծումով տրվող աստվածային հատուկ շնորհքի իմաստությունը, արիությունը և զորությունը կարողանաք ծառայեցնել ի խնդիր հայության հոգևոր, բարոյական ու ազգային ինքնագիտակցության վերակերտման, որով հավատում ենք, որ պայմանավորված է մեր Ազգի ու Հայրենիքի փրկությունն ու վերելքը բոլո՛ր բնագավառներում՝ հոգուտ մարդկության և ի փառս Քրիստոսի:

Հավատքի սիրով՝

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
«Հայք» հասպատության նախագահ

Ք. Վաշինգտոն, ԱՄՆ

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Սիրելի Վեհափառ Տեր.

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական խորհուրդը, բոլոր աշխատակիցները և անձամբ ես սրտանց շնորհավորում ենք Ձեզ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու կապակցությամբ:

Մատենադարանը, որպես Ս. Էջմիածնի հոգեհարազատ զավակ, մեր բազմադարյան հոգևոր մշակույթի, ձեռագիր մատյանների պահպանության, ուսումնասիրման և հրապարակման գործը ստանձնած համազգային կենտրոն, լիահույս է, որ Ձեր գահակալության տարիներին ավելի կամրապնդվեն և կսերտանան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Մաշտոցյան Մատենադարանի գիտական, գործնական և հոգևոր կապերը, մի համագործակցություն, որի հիմքերը դրել են Ձեր անմիջական նախորդներ երջանկահիշատակ Վազգեն Ա և Գարեգին Ա Կաթողիկոսները:

Մեր Եկեղեցուն և ազգին ծառայելու Ձեր պատրաստակամությունը, Ձեր եռանդն ու նվիրվածությունը Ս. Էջմիածնին այն գրավականներն են, որ մեզ բոլորիս հույս են տալիս լավատեսորեն նայելու ապագային, իսկ ներկայումս՝ հաղթահարելու մեզ և Ձեզ բաժին ընկած բոլոր դժվարությունները:

Ցանկանում ենք Ձեզ, Վեհափառ Տեր, քաջառողջություն, արևշատություն, ուժ ու կորով՝ մեր Սուրբ Եկեղեցուն և ժողովրդին ծառայելու վսեմ գործում:

Ս. Ս. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ,
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ